

ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 24-ի նիստի N 36 արձանագրային որոշման

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

№	Միջոցառումներ, հանձնարարություններ, աշխատանքներ	Կատարող կազմակերպությունը	Կատարման ժամկետը	Ֆինանսական աղբյուրը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշ
1	2	3	4	5	6	7
1.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրի իրականացման ձևերի ու ուղղորդող նորմատիվների մշակում և հաստատում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2017թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման հիմքերի ստեղծում	ՀՀ բնակչության տարբեր տարիքային խմբերի (6-ից մինչև 60 տարեկան և բարձր) ֆիզիկական համապատասխան պատրաստության չափորոշիչների սահմանում
2.	Ուղղորդող նորմատիվների հաղթահարման դեպքում բնակչության տարբեր տարիքային խմբերի համար խրախուսման մեխանիզմների մշակում և հաստատում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2017թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	Տարբեր տարիքային խմբերի համար ծրագրին մասնակցության խթանում	Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար խրախուսման մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ
3.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության	2017-2019 ուսումնական տարիների ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Ծրագրի միջոցառումների անցկացման միջոցով ուսանողության շրջանում ֆիզիկական	Ծրագրի փորձնական փուլին առնվազն 1000 ուսանողների մասնակցություն

	ծրագրի փորձնական փուլ (կամավորության սկզբունքով՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար)	Նախարարություն, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (համաձայնությամբ), Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան (համաձայնությամբ),			պատրաստվածության մակարդակի բարձրացում և առողջության ամրապնդում, ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու համար հնարավորությունների ընձեռում	
4.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրի փորձնական փուլի արդյունքների վերլուծում, Ծրագրում անհրաժեշտ փոփոխությունների կատարում, ֆինանսական հաշվարկի ներկայացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2019 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	Ծրագրի վերջնական տարբերակի մշակում, Հայաստանի Հանրապետության մարզերում, Արցախի Հանրապետությունում և Երևան քաղաքում բնակչության բոլոր տարիքային խմբերի ներգրավում	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամից, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանից Ծրագրի առաջին փուլի անցկացման վերաբերյալ հաշվետվությունների ամփոփում, ըստ արդյունքի՝ Ծրագրի լրամշակում, ֆինանսական հաշվարկի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ
5.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրի ամբողջական ներդրում (10 աստիճաններ՝ բոլոր	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և	2020-2025 թթ.	ՀՀ պետական բյուջե, համայնքային բյուջեներ, ՀՀ օրենսդրությամբ	Ծրագրի միջոցառումների անցկացման միջոցով բնակչության շրջանում ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացում և առողջության ամրապնդում,	ՀՀ և ԼՂՀ բնակչության առնվազն 15 % -ի մասնակցություն Ծրագրին

	տարիքային խմբերի համար)	զարգացման նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն (համաձայնությամբ), ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)		չարգելված այլ աղբյուրներ	Ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու համար հնարավորությունների ընձեռում	
6.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրի մասնակիցների պարտադիր բժշկական զննում՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով (ըստ բնակության վայրի)	ՀՀ առողջապահության նախարարություն	2017-2025 թթ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Առողջական խնդիրներ ունեցող բնակիչների՝ ծրագրին մասնակցելու դեպքերի բացառում	Ծրագրի մասնակիցների բժշկական զննման տեղեկանքների առկայություն

7.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրի մեջ նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության, ՀՀ պաշտպանության նախարարության ենթակա ուսումնական հաստատություններում սովորողների և համապատասխան քաղաքացիական անձնակազմի ներգրավում	ՀՀ պաշտպանության նախարարության	2020-2025 թթ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Ծրագրի միջոցով նախազորակոչային և զորակոչային տարիքի բնակչության, ինչպես նաև զինծառայողների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացում, ռազմակիրառական նշանակության խնդիրների լուծում	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության, ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների սովորողների առնվազն 80 %-ի մասնակցություն Ծրագրին
8.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրի միջոցով առողջ ապրելակերպի, օլիմպիական գաղափարների քարոզչություն	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ),	2020-2025 թթ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ	Գովազդային վահանակների, ցուցապաստառների, տեսահոլովակների, ինչպես նաև տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվական միջոցներով հանրությանը հրազեկում անցկացվող միջոցառումների մասին, առողջ կենսակերպի գովազդման միջոցով բնակչության լայն խավերին ֆիզկուլտուրայի և սպորտի պարապմունքներում ներգրավում, սպորտի՝ որպես ամուր ընտանիքի ֆիզիկական և հոգևոր առողջության կարևորագույն բաղադրիչի գովազդում	Տարեկան առնվազն երկու խոշոր լրատվամիջոցներով Ծրագրի, առողջ ապրելակերպի, օլիմպիական գաղափարների քարոզչություն

